


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
հարկակալ	7 "
վեցամսեայ	15 ֆր.
Արսասահմանի	8 "
համար հարկակալ	3 սլ.
վեցամսեայ	1.50 "

Մանուգրակ սոյր սուրճի 40 սակրիսիսի վերջին երկուսն համար 20 սակրիսի կ. հրեհին ս եկի սնկալնեռու համար 20 0/0 գեղը կրչայ:

Հասցեայի համար ձեռք 10 սակրիսի կ



ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ՔԱՂՂՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՈՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲԵՍԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАЯЪР

Դասակ եւ դրամ  
դրկեց խմբագրութեան  
հասցիին

Редакция на вѣстникъ  
"Шаржумъ"  
Варна

Redaction du journal  
"Charjoum"  
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար  
ձեռք

15 ՍԱԼԹԻՄ  
Արսասահմանի համար  
ձեռք

20 ՍԱԼԹԻՄ

Գրութիւնք եւ չնկ  
սրուիք

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲՆԺՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԻԿ ԿՃԱՐԷ

ՕԳՈՍՏՈՍԻՑ ՕԳՈՍՏՈՍ  
Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

Այս տարին հայ ժողովրդի համար ամենաձախող տարիներից մին է. եթէ ոչ ամենաձախողը. Հայաստանի ներքին նահանգներում ժողովուրդը կոտորվեց, չարչարվեց. կոզկասի հայու թիւը թալանվեց, կոտորվեց ու վերջին զանգուշի վայրէջքի ցեղերի աշխատանքները որոնք ուր ոտք էին կոխում, ոչնչացնում էին ամեն ինչ. Մեր յեղափոխական ձեռնարկները Սասունում, Գուշում, Զմիւռնիայում վիճեցին միայն թափած ճիգերի միջոցառումները թողնելով մեզ Այդ բացասականների դիմաց մենք, ունենք միայն մի դրական երեւոյթ— կոզկասահայ գարոցների և եկեղեցական հարստութեանց վերագարձը. թէ այս որչափ զբոսական յաջողութիւն է այդ էլ ապագան միայն կարող է ցոյց տալ:

Այսօր դառն իրականութեան պատկերը այս է. հայերի գիակների կոյտեր ծածկաստանում և կոզկասում, հարիւրաւոր գուցէ և հազարաւոր հայ աւերակ տների փլատակներ թիւրքիայում և կոզկասում, հազարաւոր արնանկներ թիւրքիայում և կոզկասում թէ նիւթական և թէ ֆիզիքական...

Միջոցառական, քաջալերող, յուսադրող ոչ մի նշան հայութեան համար. Բայց միթէ այս դառն իրականութիւնը պէտք է յուսահատեցնէ մեզ. Ոչ և ոչ. մեծ գծաբառութիւններն են որ սարուկ, ընկած բայց ոտքի կանգնելու ընդունակ ցեղերին մատնանում են իրենց ներկայի վտանգաւորութիւնը և ստիպում մտածել, լրջօրէն մտածել վտանգաւոր իրականութեան կործանարար ընթացքը կասեցնելու համար: Մեծ վտանգներն են որ գլուխը բարձրացնող ցեղերի կուռոց տարրին մատնանում են պայքարի հսկայական դժուարը

Թիւնները և հրամայողական կերպով ստիպում երեխայօրէն չը վերաբերվել դէպի վերածնութեան և ազատագրութեան գործը. մեծ գծաբառութիւններն են որ ցեղի կուռոց տարրի մէջ սպրդած թոյլ, թեթեւօղիկ և ազոտ տարրին գուրս են չարտում գործունէութեան ասպարէզից. այն տարրին որ ազատամարտութեան գործին մի քանի համակրական խօսքեր նետելով, մի քանի սանտիմ շարտելով ճակատին փակցնում է յեղափոխական տիրոջ: Մեծ գծաբառութիւններն են որ ըմբոստանալու տրամագիր ցեղի յեղափոխական կազմակերպութիւններին ստիպում են յարմարվել ստեղծված պահանջներին, ենթարկվել նրանց:

Այս իրականութիւնը սարսափելի է. բոտ երեւոյթին յուսահատական, հսկայական պահանջներով ցրցված մեր յեղափոխական կազմակերպութիւնների առջեւ. ու այդ պահանջներին պէտք է բաւարարութիւն տրվի. հակառակ պարագային իրօք հայութեան վրձնէր յուսահատականի պիտի վերածվի. այնուհետեւ ոչ հերոսասմբերը, ոչ այստեղ այնտեղ նետված ուղեքները չեն կարող մեզ երաշխաւորել համեմատական երջանիկ ապագայ:

Ամենափառ իրականութեան առջեւ իսկ ու է ցեղի յեղափոխական տարր չը պէտք է յուսահատվի. բայց նա իրաւունք չունի մոռանալու որ երկարատեւ յուսահատական շրջանները, մանաւանդ փոքրիկ անպաշտպան ցեղերի համար կոյտաբեր են. եթէ յեղափոխական տարրը չէ կարողանում ըմբռնել որ յեղափոխական կեանքի ամեն մի շրջան գործունէութեան տարբեր եղանակի պէտքը ունի գործելակերպը ինքը կեանքը ցոյց է տալիս մեզ իր ջանքախիչ հարւածներով և ոճի կամ բացարձակ խելագարութիւն է չը գիտնալ այդ դասերից օգտվել:

Ճ Ա Ռ Ն Ա Կ Ա Ն  
ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ

Կայծակի արագութեամբ ծագեցաւ այդ: Այս րոպէիս, երբ սոյն տողերը կը գրենք, քանի մը ամիսներ տառաջ գունագեղ լապտերներով, ջանքերով ու ախճածան արեւածաղնեքով «պանդաններ կանչող ձարօն անբոխը» ստիպւածը համար իր բանակին եւ նաւատորմին յազմանակները, այսօր սրամտած ու կատաղի վագրի մը երեւոյթը առած է...

Միջատոյի Ռուզէլթին զրկած հեռագիրն դանդաղումը, եւ գրութեան տեղը սոււած էին, երբ ահա այսօր ալ լուր կուգայ թէ Թօքիօն կրակի եւ ծուխի մէջ է... Հեռագրական շատ մը գիծեր կտրուած են կատաղած ամբոխին կողմէ և մամուլ ու թաղաքական ամէն կարգի կուսակցութիւններ ժողովրդին կողմը անցած կը պահանջեն կամ անմիջական հեռացում ներկայ քապիւնէին և կամ կրպակնան ամեն ինչ տակնու վրայ ընել. Օրինակները արդէն կերեւան այժմէն...

«Տէլիֆ թէլեգրաֆ» եւ «Թայմզի» սիւնակները, որ լեցուած են այսօր ներքին յուզումները մանրամասնող տեղեկագիրներով, կը պարզեն գարհուրելի իրականութիւնը:

Դեռ խաղաղութեան դաշինքը չը կնքուած՝ ժողովուրդն ու մամուլը զայրացած՝ պահանջած էին կառավարութեան չընդունել երբէք Ռուսաստանի պայմանը եւ շարունակել պատերազմը, քանի որ ան չուզեր պարագմական տուգանք տալ եւ Սախալին կղզին ձարօնի թողուլ, կառավարութիւնը անել կացութեան մը մէջ ինկաւ: Հազիւ թէ պառօն Բոմբար կը պատրաստուէր խզել բանակցութիւնը, քանի ինքն եւս համակիր էր ժողովրդի պահանջին. երբ լուր կուգայ Թօքիօնէ քիչ մը եւս յետաձգման, ու ասկէ հազիւ երկու օր վերջ՝ հրահանգ ետ առնելու պատերազմական տուգանքն ու Սախալինի պահանջը:

Սա մեծերու տարած յաղթանակն էր երիտասարդներուն վրայ — նախորդներու գլխաւոր ըլլալով մարքիլ Իոօ, եւ համակիր խաղաղութեան կայացման, որուն գործակալն էր Բօրթոմօրի մէջ պ. Բամէնքօ, և իրտասարդները համակիր էին պատերազմի շարունակման, եթէ Ռուսաստան յամառի լիուրի գոհացում տալ իրենց պայմաններուն, ու ասոնց կը պատկանէր նաեւ պատն

Բոմբար. սակայն վերջինս կամայականայ կատարուի տեղի տալ, այսպէսով արժանանալով ճարտական ժողովրդի կատաղի ատելութեան, որպէս թէ ազգը անպատուեց: Կըսուի թէ խաղաղութեան կնքումէն վերջ Բոմբար մասնաւոր զգուշութեան ներքեւ կը շրջագայէր, մոլեռանդ ճարտի մը զոհը չըլլալու համար:

Մամուլը չը դադարեցաւ ժողովուրդը գրգռող առաջնորդներ հրատարակելէ. ասոնց եկան միացան զանազան կուսակցութիւններ, եւ ահա սեպտ. 6ի համար հսկայ ցոյց մը կը կազմակերպուի: Մօտ 100,000է բաղկացած խումբ մը կուգէ միթիւնկ մը սարքել հասարակաց պարտէզին մէջ: Ոստիկանութիւնը, կանուխէն զգուշութիւններ ձեռք առած ըլլալով՝ կը մերժէ անցքը բաց թողուլ ամբոխին: Զայրոյթը կը սաստկանայ Քաղաքապետութեան անդամներէն մին, իր եօթը պաշտօնանակիցներուն հետ վրայ հասնելով՝ կը հրամայէ պարտէզին դռները բանալ եւ ժողովրդին ազատութիւնը չը բռնաբարել: Կրօնականը կը կատարուի ու կրկնապէս տաքցած ամբոխը կը խուժէ պարտէզ ու բացօթեայ միթիւնկը կըսկսի: Կորոնէն անմիջական կերպով հեռագրել Օհամայնի ետ չը քաշուի ու շարունակել կոկը անպայման. ապա կը կազմեն յանձնախումբ մը գիմելու համար Միջատօին եւ խնդրելու չը վաւերացնել խաղաղութեան դաշինքը, գիտնալով որ ինք զոհ եղած է քանի մը միջնատներու թելադրանքին: Կսկսին ուռաներ Միջատօին համար եւ կոկորդիլը կը պոռան հրամարում եւ հեռացում ներկայ Քապիւնէին:

Այդ նոյն րոպէին է որ կը տարածուի չընկ մը խուժանին մէջ — «Կոմս Բացուրան, ներքին գործոց նախարարը...» փրփրած ու փոթորկած, կը յարձակին յիշեալին. չէնքին վրայ, որ կը գտնուի ճիշդ Բարքին դէմը եւ որ շրջապատուած է զինուորներով, Յարձակումը կը մնայ անհետեւանք, չնորհիւ ուժեղ դիմադրութեան գունդերուն կողմէ: Վերջի վերջոյ, յուսահատ կը վազեն ուրիշ կողմ եւ չէնքին մէջ այլ մասէն կրակ կուտան. փայտաչէն մասերը ճարձատելով կը վառին, վրայ կը հասնին հրչէջները, որոնց կը դիմադրուէ խուժանը վայրագ աղաղակներով ու քարերով: Հրդեհը կըսկսի նաեւ այլ կողմեր. կը կանչուին ձիաւոր գունդեր պաշտպանութեան: Ամբոխը ապա կը յարձակի

ՎԱՐԴՈ

«Քոթուսին» թերթի խմբագրատան վրայ, — կիսապաշտօնական լրագիր մը. որ միակը բլլալով գոված ու խեղճի քայլ մը նկատած էր կառավարութեան վարմունքը, կը ջախջախեն ու կը կտորաւեն ինչ որ կը հանդիպի, մեքենայ, մամուլ, սաներ, եւն եւն, ու կը վիրաւորուին խմբագիրներէն ու աշխատակարարներէն ոմանք: Զիւարդ գունդը հազիւ հազ կրնայ կատարել, ոչնչացումէ փրկել խմբագրութիւնը: Կառավարական բոլոր հիմնարկութեանց շուրջը պատնէշներ բարձրացուած են ու թօքիօն կը գտնուի պաշարման վիճակի մէջ: Թվական կըսուի որ ասոնք մասնաւորապէս կըլլան Դօշի ըսուած ստոր դասակարգի կողմէ, որ վճարուած է ամբողջ, սակայն եւ այնպէս ճշմարտութիւնը սա է որ զայրոյթը համայնական է:

Անա թէ ինչ զարուբելի ոյժ մըն է ժողովրդին կամքը:

Պ. Սաթօ, լսելով այս լուրերը, յայտարարած է որ իրապէս ծանր են եւ շատ աղետալի վիճակներ կրնայ ունենալ, թէեւ կարճատեւ:

«Ժողովուրդը միշտ ընդունակ չէ ամեն խնդրի խորը տեսնելու անմիջական կերպով, երբ մանաւանդ քիչ մըն ալ գրգռած են զայն, աւելցուցած է միեւնոյն անձնաւորութիւնը թղթակցի մը. — մենք տիպաւորներս հարկադրուած ենք աչքի առաջ ունենալ ընդհանուր շահերը: Այսուհանդերձ, մեծ վախ մը չի կայ: Ընթացող չափազանց հայրենասէր է, որպէս զի շուտով չըմբռնէ իրեն եղած բարիքը: Ժողովուրդը մը որ տուաւ 200,00: զո՞հ պատերազմի դաշտին վրայ, կրնայ անշուշտ քանի մը հարիւր ալ աւել ներթին աննշան խլրտուներու համար...»

Ամենամեծ երկիւղը, որ կայ, դա ալ Մանջուրիայի բանակէն է, որ մի գուցէ գայ եւ ամբողջին միանայ, քանի որ ան եւս անպատուած կը համարէ ինքզինքը սոյն վերջարանով «Այդ մասին անհոգ եղէք, կըսէ պ. Սաթօ, մինչեւ անոնց վերա-

դարձը անուշազն տարի մը հարկաւոր է...»

Ճարտնական լիազօրները որոշած են անոնց յապաղման վերագտնելով թօքիօ, բացի Գօսուրայէ, որ արդէն նախապէս կարգադրած է Բանաստատայեցիք:

Մ. Յոլակ

ՆԱԽԱԳԱՀ ՈՒՌՉՎԵԼԹԸ

Այսօր մեծ պատերազմի մը վերջ տրուելուն պատճառով, օրուան մարդը Ասիական Նախագահ Ռուզվելթին է. որովհետեւ ան եղաւ հաշտութեան համար միջամտողը և մինչև վերջը անյուսահատօրէն այդ միջամտութիւնը շարունակողը երկու իրարու դէմ ծայր աստիճան կատաղած պետութիւններու միջև:

Ռուզվելթի ջանքերուն կորովի շնորհիւ վերջը տրուեցաւ պատերազմի մը, որը Ասիայ հակայական դաշտերը վերածած էր մինչև օրս գեո չը տեսնուած հոսանքի սպանդանոցի մը: Ուստի աւելորդ չենք համարել այդ մեծ մարդուն մասին կարճ կենսագրական տեղեկութիւններ հաղորդել «Շարժումի ընթացողներուն»:

Ռուզվելթի նախնիքը Հօլանտացի գաղթականներ են, որոնք երկու հարիւր տարի առաջ հաստատուեցան Նիւ-Եորքի մէջ: Ռուզվելթ ծնուեցաւ հոն 1858 թուականին ուր և գրեւէ անցուց իր ամբողջ կեանքը. անոր շնորհաբերին վրայ մեծ ազդեցութիւն ունեցած է իր հայրը, հարուստ վաճառական մը, որուն կը վերագրեն մանկավարժական հետաքրքիր ափօրիզներ ուղղուած իր որդուն. հայրը կըսէր. «Մարդս իրատուք չունի ան գործ կայնելու»: «Երկրին վրայ ա նօգուտ արարածներու համար տեղ չը կայ»: Ուստի զարմանալի չէ որ Ռուզվելթ ամենապարզի հասակէն վարժուած է ինքնագործութեան. հօր մահէն վերջը Ռուզվելթ յաճախած է

Հարվարտի համալսարանը. բայց աչքի զարկած չէ ոչ պերճախօսութեամբ և ոչ ալ մեծ յառաջադիմութիւնով: Այնուամենայնիւ զիտեղու ընդունակ մարդիկ նկատած են անոր օտեղծուելիք նկարագրին հազուապէս յատկութիւնները: Դիւանապետ մը զեռայն ատեն Ռուզվելթի համար ըսած է... «Էլի չոյրով կը սլանայ դէպի նախապահական ակտիւ»:

Համալսարանը աւարտելէն յետոյ Ռուզվելթը կը մեկնի Եւրոպա ծանօթանալու համար հին քաղաքաւորութեան կեանքին և գաղափարներուն հետ:

Եւրոպայէն վերադառնալով, թէեւ պատկանելով բարձր դասակարգին, չի հրապուրուել որ այնպիսի փայլով և միանգամայն կը մղուի հասարակական պայքարներու հոսանքի մէջ իր երիտասարդ կորովի կեռքը աշակցութեամբը: Նիւ-Եորքը Ռուզվելթը ընտրեց հասարակապետական անդամ ազգային Բօնվելթի:

Բայց ամենու համար անսպասելի կերպով Ռուզվելթը կը հեռանայ քաղաքական գործունէութենէ, որովհետեւ ոչ կրնար յարմարիլ իր պաշտօնակիրներուն և ոչ ալ կուսակցական պայքարի կուսակածելի բարձրուն:

Ինականէն կը ընտ որսորդ, պատանակութեան միջոցին զգեւորուող Մայն Ռիտի հերոսներով՝ Ռուզվելթը կը մեկնի Միսսուրի գետի ափերը հոն պարզ և ուժեղ մարդոց հետ բնութեան մէջ ապրելու:

Անչի կը մեծանայ թափառական հովիւ քօղ պօյ, որսորդներուն. ու ամբողջ հողիւ միացած ասոնց կը մասնակցի արջեր և ողնաւոր օձերու որսորդութեան: Գօվպօյներու հետ ապրելով և անոնց շահերը ըմբռնելով Ռուզվելթ անոնց նամակները կը գրէ, գրքեր կը կարգայ և կաշխատի այդ բնութեան զաւակներուն մտքերը լուսաւորելու ինարկէ Գօվպօյներն ալ անձուրիութեամբ կը պատասխանէին և պատրաստ էին Ռուզվելթի հետ կրակի ու ջուրի մէջ

նետուիլ: Այս անպատեհրու մէջ ալ Ռուզվելթը գրականութիւնը չի մոռնար և շարք մը նկարագրութիւններ կը պատրաստէ Գօվպօյներու կեանքէն. 1886ի ամառը Ռուզվելթը իր հօտերը ծախելով կը բաժնուի հովիւ որսորդներէն և կը մեկնի Անգլիա. Հայրենիք վերադառնալէն յետոյ Հարիսն նախագահի օրով Ռուզվելթը կը նշանակուի Նիւ-Եորքի քաղաքային վարչութիւնը բարենորոգելու համար նշանակուած յանձնախմբին մէջ ու վեց տարուան ընթացքում մեծ կորովով կը մաքառի բոլոր զեղումներու դէմ. 1895 ին կը մտնայ Նիւ-Եորքի աստիճանով թիւնը վերանորոգելու համար նշանակուած յանձնախմբին մէջ եւ շուտով կարգ ու ճշմարտասիրութիւն կը մտցնէ հոն:

Այդ պաշտօնէն յետոյ Ռուզվելթը կը հրաւիրուի ծովային վարչութեան մէջ, ու աչքի առջև ունենալով Սպանիոյ հետ ունենալիք պատերազմը խստիւ կը պահանջէ արմատական բարենորոգումներ մտցնել ծովային վարչութեան եւ նաւատորմի ղեկի մէջ:

Պատերազմը սկսելուն պէս Ռուզվելթը ձեռքբեր ծալած իր ատենանաւակներէն մէջ չի նստիր այլ կերթայ արեւմտաքաղաքային կրկնապարտի հաշակաւոր զօրախումբը, որը մեծ սխալագործութիւններ գործեց եւ Ռուզվելթը պակեց ատասպետական փառքով:

Պատերազմէն վերադառնալուն պէս Ռուզվելթը ընտրուեցաւ Նիւ-Եորքի նախագահութեւ, վերջը ընտրուեցաւ Գօվպօյի փոխ նախագահ. ու մեծ զարկ տուաւ Մաքքիլիի ընտրութեան: Մաքքիլի 1901 ին սպանուեց Ռուզվելթը պարտաւորուեցաւ մինչև նոր նախագահին ընտրութիւնը նախագահի պաշտօնը վարելու վերջը վերընտրուեցաւ նախագահ:

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԵՅԲ  
8  
ԴԵՖԻ  
Հայկական Ռոման մը  
(Թարգմանութիւն Անգլիերէնէ)  
ՊԼ. Ե.  
ՔԱՐԱՅԻՐ

Երբ աչքերս բացի, բազմոցին վերայ պտուկած էի: Անհանգիստ կերպով գարձայ: Ուր էի: Երա՞զ էր: Կամաց կամաց ինքնագիտակցութիւնս վերադարձաւ: Տեսայ վառուած կանթեղը, ժեռուտ քարանձաւը, կոշտ բազմոցը: Ետեւ պատող դէմքեր նրկատեցի: Միքէն կը ճանչնայի, սակայն ուրիշ մ'ալ կար, որ շուտով ստուերին մէջէն կ'անյայտանար: Անուշահոտ բոյրը—թանկագին վարդեջուրը—որ այնքան կը սիրէի, շուտով ազդեց վրաս ու ճակատս հնչտալիօրէն զովացած կզգայի: Սակայն, խաւարը կրկին ախրապետեց: Լոյսը վերստին պլպլաց, ու այն ստուերային գէմքն ու իրանը, որ նախապէս տեսած էի՝ նորէն երեւ-

ցաւ: Մտեցաւ ինձի, ձեռքը բռնած, ինչ որ կը թուէր ինձ, բոցավառ լոյսերու փունջ մը: Ասկէ սաթի քանի մը կաթիլներ վար ինկան աւելի նուազ լոյսով մը: Աչքերս հրապուրուեցան: Ինքնազգիտակցութեան ժողովը հմայուած՝ ինչո՞ղ սաթի կաթիլները կը զիտէի, որոնք միեւնոյն ժամանակ լոյսեր կարճակէի: Ինչո՞նք իսկ համրեցի զանոնք—մէկ, երկու, երեք... մինչև տասը: Այնուհետեւ հետաքրքրութիւնս զմայլումս դադրեցաւ: Բոցավառ լոյսերու շողշողուն փայլը մարեցաւ: Խաւարը կրկին թագաւորեց:

Երկրորդ զգացումս եղաւ բերնիս մէջ անուշ խայթիչ համ մը և ապա կանեցաւ: Խոր քնոյ մը մէջ ինկայ Ռոման տեսչ այս անբարձր քունը, չեմ կրնար ըսել, բայց, քնացած պահուս իսկ փայլայիլ, զովարար ազդեցութեան ներգործումը կզգայի յոգնած հոգեւոյս վրայ: Ինտրովիտ հանգստացած արթնացայ և տարածեւ: Լով ինքզինքս ժպիտով մը Միքէս ողջունեցի:

Ամեն ինչ յստակօրէն կը տեսէի հիմա—կանթեղը, ժեռուտ պատերը, անհարթ հողմարգելը, կենսատու դեղ ըմպելիս սլ կը յիշէի: Սակայն և այնպէս, Միքէնէն զատ ուրիշ մէկը չկար: Երկայնահասակ ստուերը, որ

իմ կէտ անզգայ դրուեցանս մէջ կերեւէր ու կաներեւոյթմանար, խոտոված ուղեղիս մէկ անխելքն ըլլալու էր:

—Ո՛հ, Միքէ, ի՞նչ «խորթելի» քուն մը ունեցայ: Գոնէ... Զի՞մա կը յիշէի այն այլանդակ սեւ սիւթները, որոնք առաջին անգամ յուրեանս միջոցին տեղի ունեցած էին: «Երկար քնացա՞յ, կը տեսնեմ թէ տակաւին լեռնետան մէջն ենք»: Կը պատրաստուէի զինքը գրկել, բայց ետ կեցուց զիս:

—Միքէ, որ բան մը չուտես, տեղէք շարժելու չես, Դէֆիս:

—Ո՛հ, անօթի չեմ. թող տուր ոտքի ելնեմ:

—Ո՛հ, սննդի չես, բայց նուազած ես. եթէ ուտելէդ առաջ ոտքի ելլես, ո՛հ, Աստուած իմ մէջ կրկին պիտի թողուս: Պատուէրները վճարական են, Ու ոտքի ելաւ զանոնք կատարելու:

—Պատուէրները վճարական են, խորհեցայ ինքնիրենս. ո՞վ կրնայ տուած ըլլալ: Ապա ուրախութեան զօրուոր հոսանքը մը յորդեց սիրտս: Պ՛հ, Սիւլէյմանս՝ մըմիջոցի: Միեւնոյն ատեն Միքէն կերակուրս պատրաստելով զբաղուած էր: Հետաքրքիր նայուածքով մը զինքը կը զիտէի ու իր չափօրէններուն կը նետուէի: Գարայրը լուսաւորող կանթեղին մօտ, քարի մը վրայ դրուած

էր սքիթի կանթեղ մը, որով Միքէն կը պատրաստէր Մէքքիլի ընտիր խանութէն, որուն այնքան սիրահար էի: Զի՞մա այլևս պատրաստ էր, որովհետեւ իր բոյրը արդէն ամբողջ մթնոլորտը լեցուած էր: Գօլը նոր գեղեցիկ գաւաթ մը, որ անուշահոտ սուրճով լեցուց: Ապա արծաթէ ափսէի մը վրայ դրաւ մեղրախաւիսի, թուղ և քանի մը կարկանդակ, Այժմ ամեն ինչ կատարելով էր: Անյայտող փորձ մը ընելէս վերջ, զլուրը երրորդ ցընելով՝ օսելը որ նստիմ, ապա ժպտեցաւ և այնուհետեւ չկրցաւ զսպել արցունքը: Խեղճ Միքէ, արդեօք որքան վիշտ ու նեղութիւն կըրած էր, մինչդեռ իր Դէֆին երկրային սահմաններէն կանցնէր:

Ինչ տխրեցակով խմեցի սուրճը: Ո՛չ ոք կրնար Միքէիս նման սուրճ պատրաստել. Հայրս, որ իր երիտասարդութեան շատ տեղեր ճամբորդած էր, կըսէր թէ, «Ինձ» ուր որ կուգես, սակայն էնոր պատրաստած սուրճին պէս չես կրնար ունէ անը մը գտնել:

Միքէն, անդին դարձած սքիթի կանթեղը կը շտկէր. բնականաբար հոգեկան տագնապը ծածկելու պատրուակով, որ իրեն հաւար չափէն աւելի էր Խեղճ Միքէ Անուշի չէի... Գանի կուտէի. այնքան ախորժակս

ՄՐՃԱՐԱՆՈՒՄ

—( )—

Քարէ սեղանի շուրջը հաւաքուած, մէկ մէկ քափէ առջեւնին զբաժնի սիկարնին ձեռքերնին չորս հոգի հայեր զբաղած են լուրջ խօսակցութիւնով...

Առաջինը՝ երիտասարդ մը կը ճառէ.

—Աղբար, ասանկ չի բլլար... ազ ճարօնցիները հաշտուելու չէին առանց պատերազմական տուգանք առնելու, մեղք յաղթանակներուն. ես Օյամայի և Թօկօի տեղն բլլայի չէի հպատակուեր այդ որոշման, պատե, բազմը կը շարունակէի. աս ինչ խենթիս գործն է:

—Այո, Սիպիբը առնելու էին, Բեթերսպուրկ երթալու էին, հաշտութիւնը հոն կնքելու էին, Քուրարաթքինի պարծենցածին հակառակը ընելու էին... փոխանակ մօքթիոյ, Բեթերսպուրկ՝ Ազ ճարօնցիք կարծածնու շարի ալ խելացի չեն եղած...

—Թողուցէք ազբար ճարօնցիներու խնդիրը. մեղի ինչ, աղկէ մենք օգուտ մը չունինք որ, ինչ կսէք. Յարին շնորհակալական հեռագիր մը չը զարնե՛ք, մեր եկեղեցիները, դպրոցները վերագարձուց, ընդմիջեց երրորդը:

—Ինչ շնորհակալութիւն, մեղմէն գողցածը, խլածը մեզի տըւաւ:

—Ի՞նչ ուզէր նէ, չէր տար, ընդհատեց առաջին ճառախօսը. հեռագրէ մը ընչ վիսա կայ, ազ ազգի կողմէն դիւանագիտական խոշոր քայլ մըն է...

—Այո, ալ բան մը չէ. մենք նայինք մեր աշտեղ, քիթերնուս տակը գտնուած գործերուն: Գործցնիս քարուքանդ կըլլայ, նորէն անցեալ տարուան տնօրէնը պարոց հրաւիրած են... ասանկ աղէկ քանտիւսներ կային... ոչ մէկը չը հրաւիրեցին, այդ յայտնի անկարողը հրաւիրեցին... հոս անպատճառ գաղտնիք մը կայ...

—Բայց դուն անցեալ տարի ջերմ համակիր էիր հին տնօրէնին, այսօր ի՞նչպէս եղաւ որ փոխւեցար, այդ տեղ ալ անպատճառ բան մը կայ նկատեց երրորդ խօսակիցը... կասկածոտ ժպիտը չըթուներնու վրայէն սահեցնելով:

Այդ միջոցին ներս մտաւ հինգ երրորդ հայ մը ու տեղաւորելով չորս հայերուն քովը սկսեց.

—Եսօր քարակալօն տեսա՞ք, հայերու մասին բան մը կա՞ր, Ազբար քանի ժամանակ է որ հայը չի գրուիր: Գործերնիս գէշ է անշուշտ, առաջները միշտ կը գնէր, սատկելու վրայ եղող շունի, ազօթող տէրտէրի և ուրիշ անասուններու պատկերով, քանի որ կը դնէր, կը հասկնայինք թէ քաղաքական աշխարհը հայով կըզբար, հայկական խնդիրը դիւանագիտական կանաչ սեղանին վրայ գըրուած է...

Ան շունչանորդի Սուլ. չը սատկեցաւ. Աստուած հետն է ազպար...

Ինչպէս ալ բլլայ վիճակնիս. գոնէ բարակալօի դրածներովը կը մխիթարուէիք, ատ ալ չիկայ հիմակ:

Բարակալօնին դեռ խօսքը չէր վերջացուցած երբ սեղանին մօտեցաւ տիրացու վարժապետը.

—Բարեւ պատելի, գոչեցին միաբերան ամենը, եկուր, նստէ, նայինք ինչ նորութիւն ունիս. թերթերը, հեռագիրները կարգացի՞ր, նոր բան մը կա՞յ:

—Նոր բանը ան է որ զիս չեն վարձեր, ստակներս ալ չեն տար, նորէն դպրոցը տակնուվրայ պիտի բլլայ, խենթին յանձներ են փողփողոց, չէք հասկնար որ ժողովրդի մը փրկութիւնը դպրոցէն կ'սպասուի, անոր վարժապետներէն: Ան կսէք թէ մեր տղաքը կաթոլիկներու, բողոքականներու դպրոցները կերթան: Ինչպէս չեթթան աղբար, խենթին քովը գրկելու փոխան, իհարկէ աւելի աղէկ է պատուելիին կամ ահօնբուն զրկել: Արժանաւոր ուսուցիչները կը հայածուին, անարժանները կը հրաւիրուին, ասանկ սպրոց յառաջագիտութիւն կըր նայ ընել և ոչ ալ ազատիլ... Պատուելիին խօսքը հազիւ վերջացած վրա հասաւ մեր վար նայի թատրոններու մշտական այցելու պարոն մը, կապելան աչքերուն վրայ քաշած. ու առանց հրաւերի սպասելու տեղաւորուեցաւ լազմամարդ սեղանին քովը.

—Եհ, երէկ գիշեր թատրոն գացի՞ք. տեսա՞ք ազ գովուած Գալիֆայեանը... ա՞ղբար, գլուխ ուռեցուցին. Գալիֆայեան, Գալիֆայեան. Բարիկ խաղցեր է Համլէթը, Թիֆլիզ խաղցեր է վա՛լլահա հիշ բան մը չարժեր... Մեր Պ. ... Պ. ... ներուն քով աչակերտ իսկ չի կրնար բլլար... Ես թատրոնէն շատ լաւ կը հաս-

կողմերը մասնաւոր սուրհանդակներ ունին, բարեկամներու սպասուածքով վտանգը նախապէս հարգելու կամ, լուրեր զրկելու կամ անտեսելու ասոր նման խուճերէն, որոնք ամենուրեք շեններուն մէջ պահուած են սպասելով... սպասելով այն օրուան, երբ մէկը հազարներ պիտի հալածէ: Մինչեւ ե՞րբ, ո՞վ ճէր, հաւատարիմ ու ճշմարիտ, նահատակները իրենց արիւնով ապառաժները պիտի լուան... մինչեւ ե՞րբ Հայաստանի հողերը իրենց որդւոց արիւնովը պիտի ոռոգուին: Մինչեւ ե՞րբ, ո՞վ... մինչեւ ե՞րբ...

Դժբաղդ Միքէն յանկարծ կանգ առաւ, ինք իր վրայ զարմանալով Անշուշտ, ի՛նչ որ ալ բլլար զարմանքը, իմ չէր կրնար գերազանցել Հառաչանքներէ զատ ուրիշ բան մը չէի լսած իրմէ մեր դժբաղդ Հայաստանի նկատմամբ, և այս կը խորհէի թէ աւելի իր տիրոջ տանը վրայ կատարուած աղէտներուն և դժբաղդութեանց պատճառաւ էր, քանի որ, շատ մը պարագաներու տակ ինձ այնպէս կը թուէր թէ՛ ատոր ճակատագիրը իր երկրինէն հեռուի եղած էր: Էնոր վաղեմի հայրենասիրու թիւեր, անտարակուսաբար, վերջերս հայուն հետ ունեցած ընկերակցութեան կամ խօսակցութեան յառաջ եկած չէր:

կնամ: Բարա մը չեմ տար ազ Գալիֆայեան ըսուածին... Պապանին և անոր խմբէն մարդ չը հրաւիրեց խաղալու որովհետեւ վախցաւ թէ զինքը գերազանցեն և ինք խախկ բլլայ...

Սեղանի շրջապատողները վայրկեան մը դիտելով այդ մարդը քահ քահ խնդացին...

Ան ես որ կը դիտէի այդ քաղաքական բարդ խնդիրները, Շէքսպիրեան բարդ խաղերը քննողները... պարտաւորուեցայ գլուխ առնել դուրս ելլալ փորձանքի մը չը հանդիպելու համար... որովհետեւ ատոնց հակառակ բան ըսել չէ կարելի, անոնք վերջը իրենց կարծիքները պաշտպանելու համար մէկ մէկ թօկօներու պիտի վերածուէին:

ՈՒՐՈՒԱԿԱՆ

ՊԱԳՈՒԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

—( )—

Պագուն արիւնշաղախ և մոխրացած. — Անթիւ զոհ և կորուստ Հայերու

Արի՛ւն, արի՛ւն, արի՛ւն... Հո՛ւր և ծո՛ւխ...

Բովանդակ Պագուն արեան ճապարիք մը դարձած է... ամբողջ Պագուն կը ներկայացնէ հրկիզութեան, բոցերու և ծուխերու անասելի տանտաղոս մը... Ռուսական վանտալիզմի է՛ն հրեշտակաւ ծրագրներէն մէկը վերջապէս անցաւ իրականու-

կը բացուէր ու երբ աւարտեցի, Միքէն ըսաւ.

—Շատ լաւ ըրիր, Դէֆիս. հիմա երթամ քիչ մը ջուր բերեմ ու Միքէն երեսդ ձեռքերդ և ոտքերդ պիտի լուայ:

Երբ կերթար՝ բռնելով գէնի՛ հարցուցի.

—Միքէ, ըսէ ինձ, ո՞ւր կէ բերիր այս անորժահած կերակուրները, այս գեղեցիկ գաւաթն ու փսփսն:

—Մեր հայրերուն Աստուածը զրկեց գանձը, Դէֆիս:

—Այո, բայց... իրեն նայեցայ խորազնին—ան անշուշտ այս քարայրին մէջ չը ձգեց:

—Ո՛չ, ո՛չ, այս անպատը չէ. թէպէտեւ եթէ ուզէր՝ կրնար ասոնք ալ անապատի մանանային նման հոս թափել: Ան իր ծառային ձեռքով զրկեց, այն ծառային, որ ընտրեց Դէֆիս ու իր թշուառ Միքէն գայլերուն ճիրաններէն ապաստելու համար: Ան հեղեղեալ ոգեւորուելով, յարեց— «Թո՛ղ մեր հայրերուն Աստուածը ներքէ իր մեղաւոր Միքէին, որ սարակուսեցաւ այն վեհանձն երիտասարդ...» վարանեցաւ. արտակարգ այտոյայտութիւն մը կար գէնիքին վրայ ու ապա գոչեց.— «Ո՛հ, այդ ատելի բառը... եթէ հայ մը բլլար...»

—Բայց ան, ընդմիջեցի—թուրք

օֆիսերը—Միքէս, ան սրտով հայ մէկ: Ան կը սիրէ մեր դժբաղդ Հայաստանը և յօժար է անոր սիրոյն զոհն՝ կեանքը: Գրգռուած ու ոգեւորուած կը խօսէի: Սիրոյ հոսանքը հոգեոյս մէջ կալեկոծէր:

—Եւ այնքան ալ բարեւէր գտնուեցաւ Դէֆիսի հանգէպ. վրայ բերաւ էն: Ամբողջ երէկ, երբ իր ընկերները գիշերային յոգնութենէն վերջ կը հանգչէին, ան Միքէին հետ սպասեց և օգնեց էնոր իր Դէֆիսի հսկել:

—Ամբողջ երէկ... գոչեցի սոսկուով, ո՞րքան ատենէ ի վեր մենք հոս ենք: Ո՛հ հայրս, խեղճ հայրս:

—Արամբանը գիտէ քու ապահովութեանդ մասին: Սո՛ւ, այն... ո՞ւր այդ անիծեալ բառը:

—Հսէ՛ մեր բարեկամը, յարեցի արագօրէն: Միքէի խուրք բառին նկատմամբ ունեցած յամառ դժկամակութեան համար չափազանց վըրտացած էի: Սիւլէյմանի սիրոյն այդ բարեցանկալի էր ինձ: Միքէ հոգւոյս ջահը թուրք մը չէ՞ր, «Ա՛յրը մեղքերը կը ծածկէ: Միքէս ըսի, կը սիրեմ այդ բառը: Հսիր թէ հայրս զիտէ իմ ապահով վիճակս, ի՛նչպէս:

—Իմ հայս ինձ ըսաւ թէ, պատասխանեց էն, առ այժմ խիստ կարեւոր գործունէութեամբ մը զբաղուած բլլալով, Հայաստանի ամեն

Մինչդեռ ես Միքէի հայրենասիրական յովան և ներկայ անսովոր կացութեան վրայ կը խորհէի էն աման մը ջուր ձեռքը վերադարձաւ: «Ջուրը քիչ է, Դէֆիս, մեր հայերը մտակայ յստակ աղբիւրէն կը լուացուին, որ հորի ձեւ ունին»:

Մատներս ջուրին մէջ թաթխեցի: Իրաւ թէ քանի մը կաթիլ էր միայն բայց զաղջ ու հաճելիօրէն անուշահոտուած, «Ո՞րքան բարի, ազնիւ ու խելացի է ան» մտածեցի: Միքէի ձեռք մէջ իմ արդուզարգս խիստ երկարատեւ էր. այդ սիրոյ վաստակ մէր իրեն համար կրկին ու կրկին լուաց ինձ: «Արեւով ու փոշիով սեւցած էի» կըսէր ան. արդուզարգիս համար բոլոր հարկաւոր ստարկաները ունէր և ամեն ինչ կանոնաւորապէս ըրաւ: Երբ աւարտեց մորթս՝ կը կսկծար ու կը կարմրէր Սակայն և այնպէս գովացած էի: Այնուհետեւ՝ մազս Ո՛հ ի՛նչ ծանր այխատանք էր այդ: Բոլորովին թափթփած էր ու գիսախուր, Բայց բաւական համբերատար աշխատութենէ մը վերջ, սեղի տուաւ Միքէի գգուանքին և իր խարտիչագոյն երկար ողորկ հիւսքերը սովորականին նման վար կախուեցան: Երբ լմացաւ, խոր հառաչ մը քաշեց Միքէ:

(Շարունակելի)

Թեան հողի վրայ... Գրեմանեա զի տիրեցեալսն ստոր քաղաքա-

Պագուն արեան մէջ... Պագուն հրկիզութեան մէջ... Պագուն խողովակներ, թաւանի և ամեն կարգի ու գոյնի վայրագութեանց թատերարեմ...

Ահա՛ թէ ի՛նչ կը հարգուին մի քանի օրերէ ի վեր եւրոպական հեռագրական գործակալութիւնները... Հայ ու թաթար կատարեալ պատերազմ են հաշակա՞մ միմեանց պէ՞մ... Կովկասահայտարեգրութեան է՛ն եղբարկան, է՛ն ողբերգական ու է՛ն սրտայոյզ էջը բացուած է այսօր, ու կը կարմրի, կը թանձրանայ ան անթիւ զոհերու արիւնով ու գիւակներով...

Այն Պագուն, որ ասկէ դեռ քանի մը աճիսներ առաջ սրտայոյս գրկընդխառնումներու յուսադրիչ տեսարան մը կը ներկայացնէր, այսօր ամենավայրագ ոճիրներու անզուգական կրկէսն է եղած... Կացութիւնը աճելի և անբացատրելիօրէն զառնակակիժ է:

Ճնշկից խանեան ու Լէնկաբձուրեան է՛ն վայրենի ու հակամարդկային բնազդներով ախտաւորուած թաթար միւսիւմանութիւնը, օգուտ քաղելով ռուս վանտալական կառավարութեան ոճրագործ լուծիներէն, և զեռաւելի՛ն, ունենալով անոր անմիջական և վստահ մեղսակից թելադրանքն ու աջակցութիւնը, իր նսխադարեան արիւնարբու արարքներուն բովանդակ ճիւղութիւնը կը թափէ այս բոպէիս հայ բնակչութեան գլխուն կովկասի մէջ:

Սեպտ. 6 էն ի վեր կոտորածն ու հրկիզումը կը շարունակուի: Ահա՛ թէ ինչի՞ կը վերագրեն սոյն արիւնալի ու ցաւալի պատկերին վերակառուցը:

Շուշիի վերջին կոտորածը, ինչպէս և Պագուի նախորդը, մեծապէս խրատ լինելով տեղական հայութեան, ամեն հարկ եղած միջոց ձեռք կառնեն ապագայ հաւանական նոր յարձակումի մը գիմագրաւելու համար: Ամսոյն 5-6ին, բանտարական գործադուլի մը առթիւ, հասած համարելով ժամանակը, իրենց պտուտ հրէշաւոր բնազդներուն յազուրդ տալու համար, թաթար ճիւղաները զէնքերով կը յարձակին բանթող հայերու վրայ և կսկսին կրակել: Տեսնելով այս, կատաղած հայութիւնը, իր նսխորդ,

ինչպէս և բազմակից շրջականերու կրած կոտորածներէն բորբոքած, կը փոխարինէ հարուածը: Շատ շանցած ամեն հայ տունէ և տանիքէ կարճակուի կրակ միւսիւման հրէշներուն վրայ, որոնք, ճարահատ, կսկսին քանդումի և հրկիզումի գործը կարծ միջոցի մը մէջ արդէն ամբողջ միւսիւմանութիւնը ոտքի է և հեռաւոր ու մօտակայ շրջականերէն ալ կը խուժեն հոն հապճեպով:

Կսկսի կատարեալ պատերազմական գրութիւն հայոց և թաթարներուն միջև: Կառավարութեան կը խնդրեն ոճանդակութիւն և ապահովութիւն թաթար խուժանէն: Ո՛չ, մերժում: Քանի որ ինք սագրած է զիրենք, ու այդ երկար նախադժուած ծրագրին հոյակապ իրականութիւնը չի կրնար եղծել իր իսկ ձեռքով:

Կախիկ կառնէ սուր ու կատապի կերպարանք: Փիփրերախ միւսիւման ճիւղութիւնը, չը բաւականանալով հայերով, իր հարստաները կուտայ անխտիր: Ա՛յ ժամանակը հասած է միջամտութեան՝ տեղական իշխանութեան համար, որովհետեւ իրենց սեփական կաշին եւս վտանգի ներքեւ է: Բայց չա՛տ ու չ...

Կախիկ գործած է համիսլամական կառու... Կեցցէ՛ Պօլսոյ խալիֆը... կը վայրահանեն անոնք, յարձակելով միեւնոյն ժամանակ պունդերուն վրայ, որոնք իբր թէ եկած էին օգնութեան... Սակայն վերջինս անզօր է դիմադրութեան... Թաթարները կը յարձակին եկեղեցիներուն և այլ շէնքերու վրայ, ուր ապաստանած են հարիւրաւոր հայեր, և, մէկ կողմէն շէնքը հրկիզելով և միւս կողմէն կոտորելով՝ կոշնչացնեն անմեղ ամբոխին... կը կանչուին նորանոր զուեղեր թիֆլիսէն, Շուշիէն և այլ շրջականերէ: Սարսափը արածուած է և քաղքին միւս կողմերը: Պիպի. Իյպաթ, Բալախանի, Սապուհչի, և այլն, նախահանքերու կեդրոնավայրը կը յանձնուին նմանապէս կրակի: Հօրերու հրկիզումը կսկսի Աւելի քան 15.000 բանտար կը գատապարտուին անգործութեան, հետեւաբար և իրենք ուս, անօթութեան և անգործութեան ճարահատ, կը մասնակցին կոտորել: Քրիստոնեաներու և իսլամներու ճակատամարտ մը գործած է այսուհետեւ: Քանդումի ու աւերումի գործը ծայր կստնէ աւելի քան երբէք հզօր թուով:

Գործարանատէրեր, ինչպէս և օտար հպատակներ, կը հեռագրին ուղղակի Ս. Բեթերսպուրկ, պահանջելով ապահովութիւն... և ցարը կը «բարեհաճի» հեռագրել Վորոնցով Տաշկովին «ամեն

ազգու» միջոց ձեռք առնել կարգը վերահաստատելու և «քրիստոնեաներու» կեանքն ու սեփականութիւնը ապահովելու, հարուածելով հրկիզողներն ու կոտորողները անխտիր, ըլլա՛յ միւսիւման թէ այլազգի...

Սակայն և այնպէս, ահա՛ անցած է 4 5 օր և տակաւին «կարգը վերահաստատուած» չէ Պագուի մէջ: Պարսիկ խաներու կողմէ կատարելապէս զինուած խուժաններ շարունակ կը թափուին սահմանազրիւն:

Աղէտը մեծ է. Անհատները հրացանաձուլութիւն օր, ու գիշեր կը լսուի, և ամբողջ քաղաքը, ըստ վերջին հեռագիրներուն, արիւնի և գիւակներու սրտագուլար ցուցադրար մըն է դարձած: Աղջ տուն կամ խանութ մնացած չէ այլ եւս, իսկ շրջականերու նախահորերն ալ, շնորհիւ կատապի հովին, մէկը միւսին ետեւէ մոխիրներու կը վերածուին...

Ձոհերու թիւը և ո՛չ մէկ կողմէն ալ յայտնի է սակայն, կարելի է ըսել որ 1000ի ենթադրութիւնը իրականութեան մինչմոտ է: Խմբաձուլութեան ենթարկուած են նաև զօրանոցը և կառավարական այլ շէնքեր: Կրակի տրուած են բոլոր պահեստի նախքերը, որոնք մօտ 30 միլիօն բուտի կը հաւասարին (բուտ 15 քիլօի չափ): Իրամական կորուստի չափը, ըստ «Նովօե Վէստի»-ի, կը մօտենայ 180 միլիօն ռուբլի գումարի մը, որոնց մեծագոյն և առաւելագոյն սուբսիդներն են Նոպէլ (ռուս ընկ.), Կասպեան և Սեւ ծով ընկ. ու Մանթաշէֆ և ընկ. ինչպէս և ուրիշ 12 ուրիշ աստիճանաբար բարձր դիրք ունեցող ընկերութիւններ...

Մէկ խօսքով, համիսլամական սարսափը կը տիրապետէ ամենուրեք... Եւրոպական թերթերէն ոմանք կը նկատեն սաթիւրքական սագրանք, նպատակ ունենալով պաշարման մէջ դնելու գրաւել Պագուն և Շուշին... Կախիկը համիսլամական է...

Իսկ սեփական թղթակից մը, արժանահաւատ աղբիւրներէ առնելով, կըսէ թէ, եթէ 48 ժամէն կարգը չը վերահաստատուի, եկող զնդերը գիւակներու, արեան գետերու և մոխիրներու վրայ միայն պիտի հսկեն...

Ահա՛ ողբերգական պատկերը Պագուի և շրջականերուն: Փախչողներու թիւը անհամար է դէպի այլ կողմեր, իսկ ոմանք ալ՝ լեռները...

Ահնուրեք և ամեն ինչ կը բուրբ արի՛ւն, հո՛ւր և ծո՛խ...

Մ.  
10 Սեպտ. 1905  
Բարիք

### ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԲ

Յարգելի Պարոն Վարդօ.

Վերջապէս ասոնք ալ սխտէ՛մ արդիւնքները էին... եկան մինչև հոս և իրենց գործը տեսան. գաւառացիական մաքուր սրտով զեկավարւած սուրբ գործը քարուքանդ բրին միմիայն իրենց կրքերուն գոհացում տալու նպատակով. սակայն միթաբական կէտը այն է որ արդարութիւնը չը պիտի խեղդուի և դիտակից մասը բոլորն ալ արձագանք պիտի տան ձեր արդարացի և քաջ վարմունքին. ուրեմն յաջողութիւն կը մտածենք առած քայլերուդ...

Մնամք բարեւեներով անկեղօ բարեկամներդ

Ընկերներ...  
25 օգոստոս  
Իուստինա քաղաք.

Յ. Գ. Մեր գրութիւններու պտուճէնները ուղղուած.

պիտի ուղարկենք քեզի որպէսզի ժամանակին ներկայացնես մեր ուզած տեղը.

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարսոյ պուլկար էրզարխը սեպտ. 1ին արտասահմանէն վերադարձին հասեր է Սօֆիա. ժողովրդին և կառավարութեան կողմէն ընդունուել է մեծ շքով: Նորին սրբութիւնը երկու շաբաթի շափ պիտի մնայ Սօֆիա:

—Ներքին գործոց նախարար պ. Բեթքով Բարիկի մէջ «Թան»-ի թղթակցին հետ տեսակցութիւն մը ունենալով յայտարարած է որ պուլկար կառավարութիւնը ժողովրդին արդարացի յանդիմանութիւնը տանելով ամեն ճիգ կը թափէ խաղաղութիւնը պահպանել, սակայն պետութիւններն ալ պէտք աշխատին Մակեդոնիոյ վիճակը իրապէս բարեփոխել, որովհետեւ վտանգաւոր է Մակեդոնիան ներկայ կացութեան մէջ թողուլ:

—Իշխանը հոկտ. 3ին Բարիկ պիտի մեկնի պաշտօնական այցելութիւն տալու նախագահ Լուպէի:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Օգոստ. 3ին Պօլսէն կը հեռագրեն որ Յրանսական կառավարութիւնը իր մէկ հպատակին ապօրինի ձերբակալութեանը համար վիսաներու հատուցում կը պահանջէ թուրք կառավարութեանէն:

—Անգլիական դեսպանատունը գոհացում կը պահանջէ Խօտէտայի քով, (Խրաբիա) անգլիական գրօշակը կողմ մակոյկի մը թալանութի ենթարկուելուն համար: